

ՃԱՓՈՂԱԿԱՆ ՀԻՔԵԱԹ

ԼԵԶՈՒՆ ԿՏՐԱԾ
Ծ Ի Տ Ի Կ Ը





ՅՈՎ. ԲՈՒՄԱՆԵԱՆԻ
 ԲԱՐԳԱՆՈՒՔԻՆ

Электротеч. Н. Аганьянцъ, Тифл. Полицейская 7 ЛИТ. ЛЕВИТЬ ТИФЛИСЬ.

Վաղարշապատի Երկրորդ
 Գրադարանի
 Կառիքի
 1923թ. հունիսի 17
 17 մայիսի



1802

ԼԵՂՈՒՆ ԿՏՐԱԾ ԾԻՏԻԿԸ

Վաղուց պատահած բան է...
 Ասում են՝ մի չար պառաւ ու-
 զում է ճերմակեղէնը օսլայի.
 մի քիչ օսլայ է դնում ամա-
 նի մէջ:

Հարևանի ձեռնասովոր ծիտը գնում է օսլան կտցահարում: Պառաւը վրայ է հասնում:

— «Այ դու անպիտան արարած...» բարկանում է վրէն ու բռնում է լեզուն կտրում:

Ծիտիկը թռչում է գնում: Հարևանուհին լսում է, որ իր սիրելի ծիտիկի լեզուն կտրել են: Սաստիկ վշտանում է. վեր է կենում իր մարդու հետ ճամփայ է բռնում, սար ու ձոր ընկնում, որ իմանայ թէ ո՞ր կողմը թռաւ իր ծիտիկը:



Մարդ ու կնիկ գնում են
ու ձէն տալի:


— Ո՞րտեղ է լեզուն կտրած
ծիտիկը: Լեզուն կտրած ծի-
տիկը ո՞րտեղ է կենում:



Վերջապէս գտնում են ծի-
տիկի տունը:


Ծիտիկը որ
տեսնում է իր
հին տէրն ու





տիրուհին իրեն տես են եկել՝
ուրախանում, աշխարհքով մին
է լինում: Ներս է հրաւիրում,
շնորհակալութիւն է անում ա-
ռաջւան տեսած լաւութիւն-
ների համար ու պատիւ է տա-
լի: Սեղան է բաց անում. էն-
քան ձուկն ու գինի է լցնում,
որ էլ դատարկ տեղ չի մնում:
Կինը, որդիքն ու թոռներն էլ
ոտի վրայ՝ ծառայում են:

Վերջը ինքն էլ բաժակը մի
կողմն է շարտում ու վեր կե-
նում ծտապարի պար գալի:
Ու էսպէս ուրախ անց են





րենց տուն
գնալու ժամա-
նակն է: Էստեղ ծի-
տիկը գնում է երկու ուռի
զամբիւղ է բերում: Ասում է.

—Ա՛յ էս երկու զամբիւղը,
մինը թեթի միւսը ծանր, որը
կուզէք՝ ընտրեցէք ձեզ համար:

Հիւրերը թէ՛

—Մենք պառաւ մարդիկ
ենք, բեր մեզ թեթիւր տուր,
աւելի լաւ է՝ հեշտ կրտանենք,
ծանրն ինչ ենք անում:

Առնում են թեթի զամբիւղն





ու վերադառնում տուն:

Տանը ասում են.

— Բեր մի բաց անենք, տես-
նենք ինչ կայ մէջը:

Բաց են անում— ի՞նչ են
տեսնում, էլ ոսկի, էլ արծաթ,
էլ անգին քար, էլ թօփերով
մետաքսեղէն... Էն տեսակ մի
բան, որ իրենց օրում իսկի
մտքներովը էլ չեն անցկացրել:
Քանի հանում են, էնքան ա-
ւելի շատ է մնում մէջը:

Անվերջ-անհատնում:

Ու միանգամից հարստա-
նում են:

Էս բանը լսում է ծիտիկի լե-
զուն կտրող չար պառաւր: Նա-
խանձում է հարևանների բախ-
տին: Հարց ու փորձ է անում
թէ որտեղ է կենում լեզուն
կտրած ծիտիկը, տեղն ու ճամ-
փէն սովորում է:

— Ես էլ կերթամ ծիտիկի
մօտ, ասում է ու ճամփայ
ընկնում: Գնում է գտնում:
Դարձեալ ծիտիկը երկու զամ-
բիւղ է բերում ու ասում.

— Ահա երկու զամբիւղ, մի-
նը ծանր, միւսը թեթև, որն
ուզում ես ջոկի քեզ համար:

Պառաւր միտք է անում՝
որ միջի գանձն ինչքան շատ
լինի՝ զամբիւղն էլ էնքան ծանր
կըլինի, ասում է— բեր ծանր
զամբիւղը տուր ինձ:





Շարակում է ծանր գամ-
բիւղն ու ճամփայ ընկնում
դէպի տուն:


Զամբիւղը քարի պէս ծանր
է լինում—տաները դժար: Տըն-
քալով տանում է:

Ծիտիկները ետեւից մտիկ
են անում ու ծիծաղում:
Տանում է տուն: Տանում է,
ազան-ազան բաց է անում:



Բաց է անում թէ չէ՝ աղ-
մուկով դուրս են թափում
այլանդակ—անճուռնի շար ո-
գինները—տեղն ու տեղը խեղ-
դում շար պառաւին:







ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 14

ՀՐԱՏ.

ԻՇԽ.ԹՈՒՄԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.



40 ԿՈՊ.